

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ ԷԴՈՒԱՐԴԻ

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
Մելանյա Գրիգորի Աստվածատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
Լուսինե Հրանտի Ֆլյան


մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ
Սուսաննա Խուրշուդի Բաղդասարյան

Առաջատար Կազմակերպություն՝ **Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ. հունվարի 30-ին, ժամը 12:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2024թ. դեկտեմբերի 27-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Թերեզա Յուրիի Ազատյան



ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող արագընթաց փոփոխությունները, միջազգային հարաբերությունների հաստատման, միջմշակութային շարունակական հաղորդակցության ապահովման անհրաժեշտությունը երկրների միջև անձանց առավել ազատ տեղաշարժի, հեռահաղորդակցության, հեռավար աշխատանքի լայն հնարավորություններ են ստեղծել, իսկ մի քանի օտար լեզուների տիրապետումը կենսական նշանակություն է ձեռք բերել: Ներկայումս առանձնակի կարևորություն ունեն նաև անձի փափուկ հմտությունները: Հետևաբար, մի քանի լեզվով արդյունավետորեն հաղորդակցվող անձը ժամանակի պահանջն է դարձել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ուսումնական հաստատությունները որդեգրում են դասավանդման և ուսումնառության նոր մոտեցումներ, նորացնում են ոչ միայն ուսուցանվող բովանդակությունը, այլ նաև մեթոդական համակարգը: Բարձրագույն ուսումնական հաստատություններում օրեցօր ավելանում է դասավանդվող օտար լեզուների թիվը: Ուսանողները սովորում են տարբեր օտար լեզուներ միաժամանակ կամ հաջորդաբար, սակայն շատ հաճախ առանց լեզուների միջև կապերի գիտակցման և դրանց հաշվառմամբ ուսումնառության գործընթացն առավել արագ և արդյունավետ դարձնելու: Ավելին, երկրորդ, երրորդ և հաջորդող օտար լեզուները չպետք է դասավանդվեն առաջին օտար լեզվի նման: Այս պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել ուսանողների ոչ միայն մայրենի, այլ նաև այլ լեզուների իմացությունը և լեզվահաղորդակցական կարողությունները, ընդհանուր հաղորդակցական, սոցիալական, ուսումնառության փորձը՝ կիրառելով բազմալեզու կարողունակությունների զարգացման համապատասխան ռազմավարություն: Հետևաբար, հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացումը ժամանակի անժխտելի պահանջ է դարձել և պետք է իրականացվի համապատասխան ռազմավարության մշակմամբ և ուսումնական գործընթացում դրա ներդրմամբ, ինչն առավել արագ, դյուրին և արդյունավետ կդարձնի յուրաքանչյուր նոր օտար լեզվի ուսուցումը: Հետազոտության թեմայի արդիականությունը հիմնավորված է նաև Հայաստանի Հանրապետությունում մեր ուսումնասիրած թեմային առնչվող հիմնարար հետազոտությունների բացակայությամբ: Այսպիսով, հետազոտության արդիականությունը պայմանավորված է ՀՀ բուհերում ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Կարևորելով թեմայի արդիականությունը՝ փորձ է արվել բացահայտելու բուհերում անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում ուսանողների բազմալեզու կարողունակությունների տիրապետման առկա դժվարությունները և մշակելու դրանց զարգացմանն ուղղված ռազմավարության

մոդել: Հետազոտության համար հիմք է հանդիսացել ՀՀ բուհերում անգլերենի դասընթացը, որում ընդգրկվում են հայերենին՝ որպես մայրենիի, ռուսերենին՝ որպես առաջին օտար լեզվի, ֆրանսերենին՝ որպես երկրորդ օտար լեզվի տիրապետող ուսանողներ: Հայ ուսանողների մայրենին՝ հայերենը, հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ է: Նրանց առաջին օտար լեզուն մեծամասամբ ռուսերենն է, քանի որ ՀՀ դպրոցներում առաջին օտար լեզուն ավանդաբար ռուսերենն է, որը դարձյալ հնդեվրոպական լեզվաընտանիքի, սակայն արևելասլավոնական ենթաճյուղի լեզու է: Երկրորդ օտար լեզուն ՀՀ դպրոցներում հիմնականում անգլերենը, գերմաներենը (որոնք հնդեվրոպական լեզվաընտանիքի արևմտագերմանական ենթաճյուղի լեզուներ են) կամ ֆրանսերենն է (որը նույն լեզվաընտանիքի, սակայն արդեն ռոմանական լեզվախմբի լեզու է): Դպրոցներում ֆրանսերեն ուսումնասիրած սովորողները բուհերում սովորաբար ընտրում են անգլերենը՝ որպես իրենց համար արդեն երրորդ օտար լեզու:

Հետազոտությունը կենտրոնանում է բուհերի ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման գործընթացի վրա, մասնավորապես՝ անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցման ընթացքում:

Աշխատանքում շեշտադրվում է այն փաստը, որ ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացումը պետք է ընթանա բազմամշակութային կարողունակությունների զարգացմանը զուգահեռ և հիմնվի ճանաչողական-հաղորդակցական մոտեցման վրա:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը

Հիմնախնդրի վերաբերյալ ՀՀ-ում կատարվել են որոշ հետազոտություններ, որոնց արդյունքները ներկայացվել են թեկնածուական և դոկտորական առենախոսություններում: Դրանք առնչվում են երկլեզվության մեթոդական տեսությունների զարգացման միտումներին (Մ.Օ. Գյոդակյան (2011)), ռուսաց լեզվի ուսուցմանը՝ հիմնված լեզվական նյութի համեմատական-տիպաբանական վերլուծության վրա (Ի.Բ. Սարգսյան (2012)), մանկավարժական բուհում ուսանողների լեզվազգացողության զարգացման մեթոդներին (Կ.Հ. Աղաբաբյան (2018)), աշակերտների շրջանում բառապաշարային փոխներթափանցման հաղթահարմանը (Հ.Թ. Բիշարյան (2024)):

Խնդրի առնչությամբ առկա են որոշ արտասահմանյան հետազոտություններ, որոնք վերաբերում են լեզվական բուհում երկրորդ օտար լեզվի ուսուցմանը ֆունկցիոնալ բազմալեզվության ձևավորման պայմաններում՝ ճապոներենի օրինակի հիման վրա (Լ.Վ. Մոլչանովա (2009)), ոչ լեզվական մասնագիտություններով ուսանողների բազմալեզու կարողունակությունների ձևավորմանը (Ն.Վ. Եվրոկիմովա (2009)), բազմալեզվության պայմաններում փոխներթափանցման հաղթահարման մեթոդիկային ռուսերենի, ավարերենի, անգլերենի օրինակների հիման վրա (Ռ.Գ. Գասանովա (2012)),

բազմամշակութային միջավայրում երրորդ օտար լեզվի ուսուցմանը՝ իտալերենի օրինակով (Ե.Ի. Սորոկինա (2012)), ինժեներական բուհի ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացմանը լրացուցիչ մասնագիտական կրթության համակարգում (Գ.Ռ. Տիմիրբաևա (2014)), անգլերենի ուսուցման բազմալեզու մոտեցմանը լեզուն՝ որպես էկոհամակարգի մաս դիտարկելու տեսանկյունից՝ Իսպանիայի, Նորվեգիայի, Չինաստանի փորձի համեմատական վերլուծությամբ (Ա. Չաբեր (2020)), Ֆինլանդիայի բարձրագույն կրթության համակարգում լեզուների ուսուցմանը բազմալեզու համատեքստում (Դ. Դարլինգ (2022)):

Հետազոտության շրջանակում մասնավորապես կարևորվել են ոլորտում իրականացված ուսումնասիրությունները (Փ. Հերդինա (2002), Յա.Մ. Կոլկեր (2007), Վ. Կիպա (2008), Տ. Վ. Ուստինովա (2021), Բ. Թոտմի (2021)), ինչպես նաև Եվրախորհրդի լեզվակրթության ոլորտին առնչվող հիմնարար փաստաթղթերը:

Հետազոտության նպատակը

Մշակել և ուսուցման գործընթացում ներդնել անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցման ընթացքում ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարության մոդել՝ հիմնված նրանց մայրենի, առաջին և երկրորդ օտար լեզուների հետ անգլերենի ընդհանրությունների և տարբերությունների բացահայտման, նրանց լեզվամշակութային, վերլեզվական, ճանաչողական-հաղորդակցական, վերճանաչողական, փոխհատուցման և փոխադրման կարողությունների ակտիվացման, սոցիալական և հուզական կարիքների վրա:

Հետազոտության օբյեկտը բուհերում անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցման ընթացքում ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարությունն է:

Հետազոտության գիտական վարկածը

ՀՀ բուհերում երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում ուսանողների լեզվական-հաղորդակցական կարողունակության զարգացումն առավել արդյունավետ կլինի, եթե այն հիմնված լինի ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման վրա, մասնավորապես՝ մշակվի և կիրառվի ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարություն.

- ուսանողների լեզվական-հաղորդակցական կարողունակության զարգացման հիմքում դրվեն նրանց մայրենի, առաջին և երկրորդ օտար լեզուների իմացությունը, լեզվական, մշակութային, հաղորդակցական և ուսումնառության փորձը, վերլեզվական կարողությունների զարգացման սկզբունքները,

- որոշվեն միջլեզվային փոխազդեցությունների ոլորտները՝ մի կողմից՝ երրորդ օտար լեզվի յուրացման գործընթացի ոլորտացման, մյուս կողմից՝ հավանական սխալների կանխարգելման նպատակով,

- ուսանողների մոտ ձևավորվեն ճանաչողական և վերճանաչողական կարողություններ,

- ներդրվեն յուրացված լեզուների համեմատությամբ երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետ մեխանիզմներ:

Հետազոտության խնդիրները

Հիմք ընդունելով հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման տեսական հիմքերը և մեխանիզմները,

- բացահայտել երրորդ օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները՝ շեշտադրելով միջլեզվային փոխազդեցությունները և համեմատությունները,

- մշակել ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացմանն ուղղված ռազմավարության մոդել՝ համապատասխան առաջադրանքների համակարգով,

- փորձարկել մշակված ռազմավարության մոդելը բուհերում անցկերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում և հիմնավորել դրա արդյունավետությունը,

- ամփոփել փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները, կատարել եզրահանգումներ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել սովորողների բազմալեզու կարողունակությունների զարգացման, երրորդ օտար լեզվի ուսուցման, միջլեզվային փոխազդեցությունների վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, լեզվաբանական, հոգելեզվաբանական, մանկավարժամեթոդական հայեցակարգերն ու տեսությունները:

Ատենախոսության հիմնախնդրի շրջանակում կատարված հետազոտության համար էական նշանակություն են ունեցել Վ. Քուքի՝ բազմակարողունակության (1991), Ն.Վ. Բարիշնիկովի՝ լեզուների համաուսուցման (2004), Գ. Նոյների և Բ. Հուֆայգենի՝ լեզուների ուսուցման բազմալեզու մոտեցման (2004), Ա.Վ. Շչեպիլովայի՝ լեզվի ուսուցման ճանաչողական-հաղորդակցական մոտեցման (2005), Ա. Ջարվիսի և Ա. Պավլենկոյի՝ միջլեզվային փոխազդեցությունների, Լ.Վ. Մուլանովայի՝ հաղորդակցական փորձի (2009), Ժ. Դիվալեի՝ բազմալեզվության և լեզուների ուսուցման հուզական կողմի միջև կապի (2012) վերաբերյալ ուսումնասիրությունները, դրանցում առաջադրված գաղափարները, տեսակետներն ու դրույթները:

Հետազոտության մեթոդները

Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետևյալ մեթոդները.

- **տեսական`** հետազոտության հիմնախնդրին առնչվող մասնագիտական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն,
- **էմպիրիկ`** մշտադիտարկում, զրույց, թեստավորում (հայտորոշիչ, ստուգիչ), փորձարարական ուսուցում, հետփորձարարական անկետավորում,
- **վիճակագրական`** մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորոյթը

Մշակվել և ուսուցման գործընթացում փորձարկվել է ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարության մոդել և առաջադրանքների համակարգ: Մշակված մոդելը և առաջադրանքների համակարգը փորձարկվել է բուհերում անգլերենի` որպես երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում, ինչը թույլ է տվել գործնականում հիմնավորել մշակված ռազմավարության և առաջադրանքների կիրառման արդյունավետությունը: Մշակված ռազմավարության մոդելը` համապատասխան առաջադրանքների համակարգով, կարող է կիրառվել նաև այլ օտար լեզուների ուսուցման գործընթացում` ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման նպատակով:

Հետազոտության տեսական նշանակությունը

Հետազոտության արդյունքում բացահայտված օրինաչափությունները, ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացումը խթանող ռազմավարության կիրառման արդյունքների վերլուծությունը լրացնում են օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի բնագավառում առկա գաղափարները, մասնավորապես` բուհերում երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման տեսական պատկերացումներն ու դրույթները: Ստացված տվյալները կարող են ընդլայնել բուհերում օտար լեզուների ուսուցման մոտեցումները` հիմք ընդունելով ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել բուհերում անգլերենի` որպես օտար լեզվի դասընթացներում, այլ օտար լեզուների դասընթացներում` մշակված ռազմավարության և առաջադրանքների համակարգը համապատասխանեցնելով տվյալ օտար լեզվի ուսուցման պահանջներին, բուհերում օտար լեզուների մանկավարժական կադրերի պատրաստման գործընթացում, դասախոսների մասնագիտական վերապատրաստման դասընթացներում, նոր ուսումնամեթոդական ձեռնարկների

ստեղծման ընթացքում: Ստացված արդյունքները կարող են նաև կիրառվել մանկավարժամեթոդական տարաբնույթ հետազոտություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացումն անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում ուսուցման կարևոր նախադրյալ է:

2. Միջազգային և միջմշակութային արդյունավետ հաղորդակցության կարևորությունը շեշտադրող ժամանակակից լեզվակրթության համատեքստում բուհերում երրորդ օտար լեզվի ուսուցման արդյունավետության երաշխիքը ուսուցման գործընթացում ուսանողների լեզվական-հաղորդակցական ներուժի, մայրենի, առաջին և երկրորդ օտար լեզուների և թիրախային լեզվի ընդհանրությունների և տարբերությունների, գիտելիքների, կարողությունների, հմտությունների, հաղորդակցության և ուսումնառության փորձի վերհանումը և դրա վրա հիմնված ուսուցման գործընթացի կազմակերպումն է:

3. Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացմանն ուղղված ռազմավարության մշակումը կարող է մեծապես բարձրացնել անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցման արդյունավետությունը:

4. Առաջարկվող ռազմավարության և առաջադրանքների համակարգի կիրառումը կնպաստի ուսանողների բազմալեզու կարողունակությունների արագ և դյուրին զարգացմանը և ուսումնառության մոտիվացիայի աճին:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում են ատենախոսության թեմային առնչվող մասնագիտական գրականության ուսումնասիրությամբ, հետազոտության գիտական մեթոդաբանությամբ, ՀՀ-ում և արտասահմանում կատարված հետազոտությունների և լավագույն փորձի համադրմամբ, հայտորոշիչ թեստավորման և փորձարարական ուսուցման ընթացքում արդյունքների ճշգրտության համար համապատասխան պայմանների ստեղծմամբ, կիրառված թեստերի հուսալիությամբ, ամփոփիչ հետփորձարարական թեստավորման և անկետավորման արդյունքներով, վիճակագրական տվյալների հստակեցմամբ և ստացված արդյունքների օբյեկտիվ վերլուծությամբ:

Հետազոտության փորձարարական բազան

Գիտափորձն անցկացվել է ՀՀ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում, Երևանի պետական համալսարանում, Հայ-ռուսական համալսարանում, համեմատական ուսումնասիրության նպատակով նաև՝ Ռումինիայի Հանրապետության Պիտեշտի համալսարանում, Չեխիայի Հանրապետության Հարավային Բոհեմիայի համալսարանում:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունն իրականացվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերում, տարբեր գիտաժողովներում:

Հետազոտությունը կատարվել է երեք փուլով.

1. Առաջին փուլում (2017-2018թթ.) ուսումնասիրվել և վերլուծության է ենթարկվել թեմային առնչվող գիտական և ուսումնամեթոդական գրականությունը, բացահայտվել են բազմալեզվության, սովորողների բազմալեզու կարողունակությունների զարգացման, երրորդ օտար լեզվի ուսուցման հոգեբանամանկավարժական հիմքերը, ձևակերպվել են ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման արդի մոտեցումները, բացահայտվել է հիմնահարցի մշակվածության աստիճանը մասնագիտական գրականության մեջ, հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, հստակեցվել են հետազոտության հիմնական հասկացությունները, որոնք կիրառվել են հետազոտության նպատակը, վարկածն ու խնդիրները սահմանելիս, կազմվել է հետազոտության իրականացման պլան, նախանշվել է բուհերում ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացումն ապահովող ռազմավարության մշակման ուղիները:

2. Երկրորդ փուլում (2018-2019թթ.) բացահայտվել են ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացմանը նպաստող գործոնները, միջլեզվային փոխազդեցությունների դերը երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում, անցկացվել է մշտադիտարկում, զրույց, կատարվել արդյունքների վերլուծություն: Նախապատրաստվել է փորձարկվող նյութը: Վերհանվել են հայերենի, ռուսերենի, ֆրանսերենի և անգլերենի միջև ընդհանրությունները և տարբերությունները՝ հատկապես շեշտադրելով ֆրանսերենի և անգլերենի միջև նմանությունները և տարբերությունները: Ատենախոսության հիմնախնդրի շուրջ մշակվել է ռազմավարության մոդել և առաջադրանքների համակարգ:

3. Երրորդ փուլում (2019-2023թթ.) կատարվել է հայտորոշիչ թեստավորում, առաջադրված վարկածի փորձարարական ստուգում (ուսուցում, կարողությունների ձևավորում, գնահատում), ամփոփվել են ստացված արդյունքները: Մշակված ռազմավարության մոդելը փորձարկվել է բուհերում անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում: Ռազմավարության արդյունավետությունը հիմնավորվել է ուսանողների առաջադիմության բարձրացմամբ, հետփորձարարական թեստավորման և անկետավորման արդյունքներով: Կատարվել է աշխատանքի վերջնական խմբագրում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսությունը ներառում է 23 աղյուսակ, 3 գծապատկեր: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 163 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները, հետազոտության մեթոդները, մեթոդաբանական հիմքը, հետազոտության փուլերը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, սահմանված է հետազոտության գիտական նորոյթը, պարզաբանված է տեսական և գործնական նշանակությունը, ներկայացված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման առանձնահատկությունները»**, գլխի առաջին՝ **«Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման տեսական դրույթները ժամանակակից լեզվակրթության համատեքստում»**, ենթագլխում ներկայացվում են բազմալեզվության, բազմալեզու կրթության, ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման, միջլեզվային փոխազդեցությունների, առաջին և հաջորդող օտար լեզուների ուսուցման վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցումներ: Անդրադարձ է կատարվում ժամանակակից լեզվակրթության համատեքստում ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման անհրաժեշտությանը, բազմալեզու և բազմամշակութային կարողունակությունների միջև կապին: Սահմանվում են «կարողունակություն», «լեզվական կարողունակություն», «հաղորդակցական կարողունակություն», «բազմակարողունակություն», «միջլեզու» հասկացությունները: Ներկայացվում են բազմալեզվության դրսևորման ձևերը՝ հետընթաց, հետընթաց-առաջընթաց, առաջընթաց: Մասնավորապես շեշտադրվում է Բ. Հաուֆայգենի և Գ. Նոյների բազմալեզվության հայեցակարգը, կոնկրետ օրինակներով ներկայացվում են ուսումնառության այն տեսությունները (ճանաչողական, կառուցողականության և սոցիալական ճանաչողության), որոնց հիման վրա կարելի է զարգացնել ուսանողների բազմալեզու կարողունակությունները:

Երկրորդ՝ **«Երրորդ օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները»**, ենթագլխում ներկայացվում են երրորդ օտար լեզվի ուսուցման հիմնական առանձնահատկությունները, մասնավորապես՝ ուսուցման հաղորդակցական-ճանաչողական մոտեցման, ուսանողների լեզվագիտակցության և լեզվական կռահման, նախնական գիտելիքի, կարողությունների, հմտությունների, հաղորդակցական և ուսումնառության փորձի, դրական փոխադրման վրա հիմնվելու կարևորությունը: Շեշտադրվում է նաև ուսանողների վերլեզվական, վերճանաչողական, սոցիալական կարողությունների ակտիվացման, ինքնուրույնության խթանման անհրաժեշտությունը: Նշվում է, որ երրորդ օտար լեզվի ուսուցման համար ընտրված մեթոդները պետք է ուղղված լինեն գործընթացի նպատակային

ինտենսիվացմանը, ինչին, ի լրումն վերոնշյալի, նպաստում են նաև «Ուսումնական համընդհանուր գործողությունները» (ՈՒՀԳ-երը):


Երրորդ՝ **«Միջլեզվային փոխազդեցությունները երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում»**, ենթազխում քննության է առնվում միջլեզվային փոխազդեցություններին տարբեր հեղինակների անդրադարձը: Ներկայացվում են միջլեզվային փոխազդեցությունները պայմանավորող գործոնները՝ տիպաբանական նմանության, կարողունակության, օտար լեզվի կարգավիճակի և ուսումնառության եղանակի: Սահմանվում են միջլեզվային փոխազդեցությունների տեսակներն արդյունքի (դրական և բացասական) և ուղղության (առաջընթաց և հետընթաց) տեսանկյունից:

Անդրադարձ է կատարվում Ն. Բարիշնիկովի՝ բազմալեզու կարողունակությունների զարգացումը ռուսական փայտե տիկնիկ-խաղալիք «մատրյոշկային» նմանեցնելու տեսությանը, ըստ որի՝ ամենամեծ «մատրյոշկան» սովորողի մայրենին է, իսկ հաջորդողները՝ նրա առաջին, երկրորդ, երրորդ և հաջորդող օտար լեզուները համապատասխանաբար: «Մատրյոշկայի» յուրաքանչյուր տիկնիկ (լեզու) հենարան է դրանում գտնվող ավելի փոքր տիկնիկների (հերթազայող լեզուների) համար, իսկ ամենամեծը (մայրենին)՝ բոլոր լեզուների համար: Նշվում է նաև, որ միջլեզվային փոխազդեցությունների վերհանման նպատակով լեզուների միջև իրականացվում են համեմատություններ, որոնք կարող են լինել ներակա և արտակա: Ներկայացվում են որոշ բառերի, արտահայտությունների, դարձվածքների, ասույթների համեմատության օրինակներ՝ հայերենի, ռուսերենի, ֆրանսերենի և անգլերենի միջև, ինչպես նաև դրանց ուսուցման մեթոդներ, որոնք, ի լրումն լեզվական-հաղորդակցական կարողունակությունների, կզարգացնեն նաև ուսանողների տրամաբանական, վերլուծական, քննադատական, ստեղծագործական, խնդիրների լուծման, եզրահանգումներ կատարելու, ճանաչողական, վերճանաչողական կարողությունները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարությունը»**, գլխի առաջին՝ **«Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարության մոդելը»**, ենթազխում ներկայացվում է «Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարության մոդելը», որն ունի չորս մակարդակ: Առաջին մակարդակում ռազմավարության դասակարգումն է երկու խմբի՝ ուսանողների լեզվահաղորդակցական կարողությունների խթանման և ինքնաբացահայտման և փոխգործակցության ակտիվացման: Երկրորդ մակարդակում տեղակայվում են առաջարկվող ինը ռազմավարությունները: «Լեզվահաղորդակցական կարողությունների խթանման» խմբում ընդգրկվում են ըմբռնման, մտապահման, վերլեզվական, փոխադրման և փոխհատուցման ռազմավարությունները, իսկ «Ինքնաբացահայտման և փոխգործակցության

ակտիվացման» խմբում՝ ճանաչողական, վերճանաչողական, հուզական և սոցիալական ռազմավարությունները: Երրորդ մակարդակում նշվում են այն մեթոդները, որոնք արդյունավետ կլինեն յուրաքանչյուր ռազմավարության շրջանակում, չորրորդ մակարդակում՝ այն առաջադրանքները, որոնք կարող են նպաստել յուրաքանչյուր ռազմավարության արդյունավետ կիրառմանը (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարության մոդել



Աշխատանքում մանրամասն ներկայացված է վերոնշյալ ռազմավարությունների ամփոփ նկարագրությունը, որում ներառված են յուրաքանչյուրի նպատակը, կիրառելի մեթոդները, առաջադրանքները, դիդակտիկ նյութերը, ինչպես նաև այն թվային գործիքները, որոնց միջոցով հնարավոր կլինի հասնել նպատակի արդյունավետ իրագործմանը:

Երկրորդ՝ «Ռազմավարության մոդելի արդյունավետության փորձարկման նախապատրաստում», ենթագլխում նկարագրվում է գիտափորձին նախորդող մշտադիտարկման, զրույցի և բուն գիտափորձի հայտորոշիչ թեստավորման փուլի ընթացքը և արդյունքների վերլուծությունը: Բուն գիտափորձն ընթացել է հետևյալ փուլերով՝ հայտորոշիչ թեստավորում, փորձարարական ուսուցում, հետփորձարարական թեստավորում,

հետփորձարարական անկետավորում: Գիտափորձի թիրախային խումբն ընդգրկել է անզվերենի A2+ մակարդակ ունեցող 3-րդ կուրսի բազմալեզու ուսանողների, որոնք, ի լրումն անզվերենի, տիրապետում են նաև ռուսերենին և ֆրանսերենին: Գիտափորձի համար ընտվել է 236 ուսանող՝ 116-ը ՀՀ-ից (Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանից՝ 62, Հայ-ռուսական համալսարանից՝ 36, Երևանի պետական համալսարանից՝ 18) և համեմատական ուսումնասիրության համար՝ 120 ուսանող արտերկրի բուհերից (Ռումինիայի Հանրապետության Պիտեշտի համալսարանից՝ 82, Չեխիայի Հանրապետության Հարավային Բոհեմիայի համալսարանից՝ 38): Նախապես վերհանվել են լեզուների միջև հնչյունաբանական, բառապաշարային, քերականական ընդհանրությունները և տարբերությունները, որոնք դասակարգվել են ըստ հետևյալ խմբերի՝ մեծամասամբ համընկնող, մասամբ համընկնող, գրեթե չհամընկնող միավորներ և երևոյթներ: Ներկայացված են կոնկրետ օրինակներ:

Մանրամասն նկարագրված են երեք փոկով իրականացված հայտորոշիչ թեստավորման ընթացքը և արդյունքների վերլուծությունը:

Մշտադիտարկման, զրույցի, ինչպես նաև հայտորոշիչ թեստավորման արդյունքների ընդհանուր վերլուծությունը ցույց է տվել, որ ուսանողների մոտ բավարար մակարդակով զարգացած չեն բազմալեզու լեզվամշակութային և հաղորդակցական, վերլեզվական, ճանաչողական, վերճանաչողական, փոխհատուցման կարողությունները:

Երրորդ՝ **«Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացմանն ուղղված փորձարարական ուսուցում և արդյունքների վերլուծություն»**, ենթազխում ներկայացվում է փորձարարական ուսուցման նկարագրությունը և արդյունքների վերլուծությունը:

Փորձարարական ուսուցումն անցկացվել է ընտրված ստուգողական և փորձարարական խմբերի հիման վրա: Հայաստանի բուհերում այն իրականացվել է մեկ կիսամյակ, իսկ արտերկրի բուհերում՝ մեկ ամիս տևողությամբ: Փորձարարական ուսուցմանը մասնակցել է 116 ուսանող Հայաստանում (58-ը՝ ստուգողական, 58-ը՝ փորձարարական խմբերում) և 120 ուսանող Ռումինիայի և Չեխիայի բուհերում (60-ը՝ ստուգողական, մյուս 60-ը՝ փորձարարական խմբերում համապատասխանաբար): Յուրաքանչյուր բուհում ուսանողները բաշխվել են ստուգողական և փորձարարական խմբերի, որպեսզի արդյունքները լինեն առավելագույնս ճշգրիտ: Հաշվի առնելով ուսանողների՝ հայտորոշիչ թեստավորման արդյունքում ի հայտ եկած դժվարությունները՝ ընտրվել են ուսուցման նյութը, համապատասխան մեթոդները, մշակվել առաջադրանքներ, որոնք կարող էին նպաստել անզվերենի դասընթացի միջոցով ուսանողների բազմալեզու կարողունակությունների բարձր մակարդակի ձևավորմանը:

Փորձարարական ուսուցման նպատակն էր ճշտել, թե մշակված ռազմավարության մոդելի կիրառումը որքանով դրական արդյունք կապահովի,

որքանով կշտկվեն ուսանողների՝ հայտորոշիչ թեստավորման արդյունքում ի հայտ եկած փոխներթափանցման արդյունքում գրանցված սխալները, որքանով կհաղթահարվեն նրանց բազմալեզու կարողունակությունների տիրապետման դժվարությունները և, ի վերջո, որքանով մոդելի ներդրումը կնպաստի ընդհանուր առմամբ ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացմանը:

Նկարագրված է փորձարարական ուսուցման ընթացքը, ներկայացված են կիրառված ռազմավարության շրջանակում փորձարկված մեթոդների, առաջադրանքների օրինակներ: Փորձարարական ուսուցման ավարտին անցկացվել է ստուգողական և փորձարարական խմբերի ուսանողների թեստավորում, ամփոփվել են ստացված արդյունքները: Ներկայացվել են Հայաստանի և արտերկրի բուհերի ստուգողական և փորձարարական խմբերի հայտորոշիչ և հետփորձարարական թեստավորման արդյունքները (տե՛ս Աղյուսակ 1, 2, 3, 4):

Աղյուսակ 1. Հայաստանի բուհերի ստուգողական խմբի հայտորոշիչ և հետփորձարարական թեստավորման արդյունքների համեմատություն

ՄՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԽՈՒՄԲ					
Հայտորոշիչ թեստավորում			Հետփորձարարական թեստավորում		
Փուլեր	Պատասխան		Փուլեր	Պատասխան	
	Ճիշտ	Սխալ		Ճիշտ	Սխալ
Առաջին փուլ	1961	6159	Առաջին փուլ	1998	6122
Երկրորդ փուլ	671	1069	Երկրորդ փուլ	720	1020
Երրորդ փուլ	325	719	Երրորդ փուլ	363	681
Ընդամենը	2957	7947	Ընդամենը	3081	7823
	10904			10904	
Տոկոսային հարաբերությամբ	27.1%	72.9%		28.3%	71.7%

Աղյուսակ 2. Հայաստանի բուհերի փորձարարական խմբի հայտորոշիչ և հետփորձարարական թեստավորման արդյունքների համեմատություն

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ					
Հայտորոշիչ թեստավորում			Հետփորձարարական թեստավորում		
Փուլեր	Պատասխան		Փուլեր	Պատասխան	
	Ճիշտ	Սխալ		Ճիշտ	Սխալ
Առաջին փուլ	1959	6161	Առաջին փուլ	4052	4068
Երկրորդ փուլ	665	1075	Երկրորդ փուլ	982	758
Երրորդ փուլ	328	716	Երրորդ փուլ	599	445
Ընդամենը	2952	7952	Ընդամենը	5633	5271
	10904			10904	
Տոկոսային հարաբերությամբ	27.1%	72.9%	Տոկոսային հարաբերությամբ	51.7%	48.3%

Հայաստանի բուհերի ստուգողական խմբերում առանձնակի աճ չի գրանցվել ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման

տեսանկյունից (1.2% ճիշտ պատասխանների աճ), մինչդեռ փորձարարական խմբում նկատելի է զգալի աճ (24.6%-ով աճել է ճիշտ պատասխանների թիվը): Եթե 24.6%-ից հանենք ստուգողական խմբի գրանցած 1.2% աճը, ապա կստացվի, որ փորձարարական ուսուցման արդյունքում գրանցվել է 23.4% իրական աճ:

Աղյուսակ 3. Արտերկրի բուհերի ստուգողական խմբի հայտորոշիչ և հետփորձարարական թեստավորման արդյունքների համեմատություն

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԽՈՒՄԲ					
Հայտորոշիչ թեստավորում			Հետփորձարարական թեստավորում		
Փուլեր	Պատասխան		Փուլեր	Պատասխան	
	Ճիշտ	Սխալ		Ճիշտ	Սխալ
Առաջին փուլ	2165	6227	Առաջին փուլ	2178	6214
Երկրորդ փուլ	711	1097	Երկրորդ փուլ	725	1083
Երրորդ փուլ	335	745	Երրորդ փուլ	353	727
Ընդամենը	3211	8069	Ընդամենը	3256	8024
	11280			11280	
Տոկոսային հարաբերությամբ	28.5%	71.5%	Տոկոսային հարաբերությամբ	28.9%	71.1%

Աղյուսակ 4. Արտերկրի բուհերի փորձարարական խմբի հայտորոշիչ և հետփորձարարական թեստավորման արդյունքների համեմատություն

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ					
Հայտորոշիչ թեստավորում			Հետփորձարարական թեստավորում		
Փուլեր	Պատասխան		Փուլեր	Պատասխան	
	Ճիշտ	Սխալ		Ճիշտ	Սխալ
Առաջին փուլ	2175	6233	Առաջին փուլ	2377	6031
Երկրորդ փուլ	718	1074	Երկրորդ փուլ	1016	776
Երրորդ փուլ	338	742	Երրորդ փուլ	583	497
Ընդամենը	3231	8049	Ընդամենը	3976	7304
	11280			11280	
Տոկոսային հարաբերությամբ	28.7%	71.3%	Տոկոսային հարաբերությամբ	35.2%	64.8%

Արտերկրի բուհերի ստուգողական խմբերում նույնպես առանձնակի աճ չի գրանցվել ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման տեսանկյունից (0.4% ճիշտ պատասխանների աճ), մինչդեռ փորձարարական խմբում նկատելի է եղել զգալի աճ ընդամենը մեկ ամսվա փորձարարական ուսուցման համար (6.5%-ով աճել է ճիշտ պատասխանների թիվը): Եթե 6.5%-ից հանենք ստուգողական խմբի գրանցած 0.4% աճը, ապա կստացվի, որ փորձարարական ուսուցման արդյունքում գրանցվել է 6.1% իրական աճ մեկ ամսվա կտրվածքով: Եթե այս արդյունքը համեմատենք մեկ կիսամյակի համար Հայաստանի բուհերի ուսանողների գրանցած 23.4%-ով աճի հետ, ապա արտերկրի բուհերում մեկ կիսամյակում ենթադրաբար այդ ցուցանիշը կլինի ևս:

Ակնհայտ է ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման դրական շարժընթացը: Նկարագրված է նաև փորձարարական ուսուցման ավարտին իրականացված հետփորձարարական անկետավորման արդյունքների վերլուծությունը, որի նպատակն էր ուսումնասիրել փորձարարական ուսուցմանը մասնակից ուսանողների կարծիքները՝ պարզելու փորձարարական ուսուցման արդյունավետությունն ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման տեսանկյունից: Վերլուծելով բոլոր պատասխանները՝ կարելի է փաստել, որ ուսանողների մոտ զարգացել են անհրաժեշտ բազմալեզու կարողունակություններ: Այսպիսով, հետփորձարարական թեստավորման և ուսանողների հետփորձարարական անկետավորման արդյունքները վկայում են այն մասին, որ փորձարարական ուսուցման շնորհիվ հաստատվել է առաջադրված գիտական վարկածի հավաստիությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիտամեթոդական գրականության ուսումնասիրության, առաջադրված խնդիրների լուծման և իրականացված փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Բուհում երրորդ օտար լեզվի ուսուցումը պետք է նպատակաուղղված լինի ուսանողների ոչ միայն լեզվական-հաղորդակցական կարողունակության, այլ նաև բազմալեզու և բազմամշակութային կարողունակությունների զարգացմանը՝ համապատասխան մասնագիտական համատեքստի հաշվառմամբ:

2. Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման գործընթացում կարևորվում է հաղորդակցական-ճանաչողական, գործունեության վրա հիմնված, խնդիրների լուծմանն ուղղված մոտեցումների կիրառումը: Նշված համատեքստում առաջին պլան է մղվում նաև բնագրային նյութերի գործածումը, ինչպես նաև իրական հաղորդակցական իրադրությունների մոդելավորումը, որը հիմք է ստեղծում քննադատական, վերլուծական, ստեղծագործական, սոցիալական կարողությունների զարգացման համար:

3. Երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացը հիմնվում է ուսանողների մայրենի, առաջին և երկրորդ օտար լեզուների իմացության, միջմշակութային, հաղորդակցական, ուսումնառության փորձի վրա և ուղեկցվում է համապատասխան ռազմավարության կիրառմամբ:

4. Երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում անհրաժեշտ է ակտիվացնել ուսանողների լեզվական կռահման, վերլեզվական, ճանաչողական և վերճանաչողական կարողությունները: Նշված համատեքստում շեշտադրվում է միջլեզվային դրական փոխադրման դերը, առաջին պլան է մղվում սովորողների ինքնուրույնությունը ուսումնառության նյութերի, սեփական ուսումնառության մեթոդների ընտրության հարցում: Կարևոր է նաև հաշվի առնել «Ուսումնական

համընդհանուր գործողությունները» (ՈՒՀԳ-երը), որոնք ձևավորվում են առաջին օտար լեզվի ուսումնառության ժամանակ և կարող են փոխադրվել յուրաքանչյուր նոր լեզվի ուսումնառության գործընթաց:

5. Միջլեզվային փոխազդեցությունների հաշվառումը ենթադրում է լեզուների միջև արտակա և ներակա համեմատություն: Երրորդ օտար լեզվի ուսուցման ժամանակ կարևորվում են տարաբնույթ փոխներթափանցման դրսևորումների ռեֆլեքսիվ բարձր մակարդակում կանխարգելումը և հաղթահարումը:

6. Երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման համար արդյունավետ է կիրառել կոնկրետ ռազմավարություն, մասնավորապես՝ լեզվահաղորդակցական կարողությունների խթանման (ըմբռնման, մտապահման, վերլեզվական, փոխադրման, փոխհատուցման) և ինքնաբացահայտման և փոխգործակցության ակտիվացման (ճանաչողական, վերճանաչողական, հուզական, սոցիալական):

7. Մեր կողմից մշակված «Բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարության մոդելը», որը ներառում է լեզվահաղորդակցական կարողությունների խթանման ու ինքնաբացահայտման և փոխգործակցության ակտիվացման ռազմավարություններ, կարող է ներդրվել ոչ միայն անգլերենի, այլև այլ օտար լեզուների ուսուցման գործընթացում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ղազարյան Ս., Ուսանողների կողմից լեզվական երևույթների գիտակցման (language awareness) ընդունակությունը որպես բազմալեզու իրազեկության ձևավորման նախապայման, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Լեզվաբանական կրթության հիմնահարցեր, Պրակ 3, Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկա, Երևան, Լինգվա, 2010, էջ 50-57:

2. Ղազարյան Ս., Հաղորդակցական փորձը՝ որպես բազմալեզվա կոմպետենցիայի ձևավորման նախապայման, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2/31/, Երևան, Լինգվա, 2014, էջ 220-226:

3. Ghazaryan, S., Principles of teaching English as a third foreign language in a multilingual setting, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Լեզվաբանություն և բանասիրություն, 1/38/, Երևան, Լինգվա, 2016, էջ 365-372:

4. Ղազարյան Ս., Բազմալեզվյան կոմպետենցիայի ձևավորման առանձնահատկությունները, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2/35/, Երևան, Լինգվա, 2016, էջ 311-317:

5. Ղազարյան Ա., Մայրենի և յուրացվող օտար լեզուների փոխազդեցությունների առանձնահատկությունները, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2/39/, Երևան, Լինգվա, 2017, էջ 358-362:

6. Ղազարյան Ա., Ինտենսիվացումը որպես երկրորդ, երրորդ օտար լեզուների արդյունավետ ուսուցման նախապայման, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2/39/, Երևան, Լինգվա, 2017, էջ 390-395:

7. Ghazaryan, S., Vocabulary clustering in the process of teaching English after French in higher educational institutions of the Republic of Armenia, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2/43/, Երևան, Լինգվա, 2018, էջ 296-312

8. Հարությունյան Կ., Ծառուրյան Բ., Դավթյան Ն., Ղազարյան Ա., Մոդուլային հենքով մասնագիտության կրթական ծրագրերի մշակման ձեռնարկ, Երևան, Լինգվա, 2020, 25 էջ:

9. Ղազարյան Ա., Վարժությունների կիրառումը անգլերենի՝ որպես 3-րդ օտար լեզվի ուսուցման գործընթացում, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2/55/, Երևան, Լինգվա, 2021, էջ 117-127:

10. Ghazaryan, S., The role of metalinguistic skills in enhancing students' plurilingual competence, Մանկավարժական միտք, 1-2 (86-87)/2024, Տաթև գիտակրթական համալիր, Երևան, Զանգակ, 2024, էջ 21-28:

11. Ghazaryan, S., Strategies for developing students' plurilingual competence, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2/67/, Երևան, Լինգվա, 2024, էջ 149-159:

КАЗАРЯН СИРАНУШ ЭДУАРДОВНА

СТРАТЕГИЯ РАЗВИТИЯ ПЛЮРИЛИНГВАЛЬНЫХ КОМПЕТЕНЦИЙ СТУДЕНТОВ В ОБУЧЕНИИ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - «Методика преподавания и обучения» (английский язык).

Защита диссертации состоится 30-го января 2025г. в 12:00 на заседании специализированного совета 020 «Педагогика» КВОН РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, пр. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В настоящее время количество иностранных языков, преподаваемых в вузах, постоянно увеличивается. Студенты изучают разные иностранные языки одновременно или последовательно, однако часто не осознают связи между языками и не учитывают их. Между тем, понимание таких связей может

сделать процесс обучения более эффективным. В процессе обучения третьему иностранному языку важно учитывать не только знание обучающимися родного языка, но и владение другими языками, их языковые коммуникативные умения, общий социальный и учебный опыт, применяя соответствующую стратегию для развития ппорилингвальных компетенций.

Следовательно, актуальность исследования обусловлена тем, что развитие ппорилингвальных компетенций студентов стало неоспоримым требованием времени, и его необходимо реализовать путем разработки соответствующей стратегии и ее внедрения в процесс обучения, что сделает процесс изучения каждого нового иностранного языка быстрее, проще и эффективнее. Актуальность темы исследования обусловлена также отсутствием фундаментальных исследований по данной теме в РА. Таким образом, актуальность исследования определяется необходимостью развития ппорилингвальных компетенций студентов вузов РА.

Принимая во внимание актуальность темы, нами была предпринята попытка выявить существующие трудности в овладении студентами ппорилингвальными компетенциями в процессе обучения английскому как третьему иностранному языку в вузах и разработать модель стратегии, направленной на их развитие. Основой исследования послужил процесс обучения английскому языку студентов, для которых армянский язык является родным, русский – первым иностранным языком, а французский – вторым иностранным языком.

Родной язык армянских студентов – армянский – язык, образующий отдельную ветвь индоевропейской языковой семьи. Их первым иностранным языком в основном является русский, поскольку первым иностранным языком в школах РА традиционно является русский, который опять же является языком индоевропейской языковой семьи, но восточнославянской подветви. Вторым иностранным языком в школах РА является преимущественно английский, немецкий (являющиеся языками западногерманской подветви индоевропейской языковой семьи) или французский (который является языком той же языковой семьи, но уже языком романской языковой группы). Студенты, изучавшие французский язык в школах, обычно выбирают в вузах английский в качестве третьего иностранного языка.

В центре внимания исследования процесс развития ппорилингвальных компетенций студентов вузов, в частности, в процессе обучения английскому как третьему иностранному языку.

В работе подчеркивается, что развитие ппорилингвальных компетенций студентов должно сочетаться с развитием поликультурных компетенций и основываться на когнитивно-коммуникативном подходе.

Цель исследования. Разработать и внедрить в процесс обучения модель стратегии развития ппорилингвальных компетенций студентов при обучении английскому языку как третьему иностранному, которая основана на выявлении сходств и различий английского языка с их родным языком, первым и вторым иностранными языками, активизацию их лингвокультурных, металингвистических, когнитивно-коммуникативных, метакогнитивных, компенсаторных умений и умении транспозиции, а также на социальных и эмоциональных потребностях.

Объектом исследования является процесс обучения английскому как третьему иностранному языку в вузах.

Предметом исследования является стратегия развития плюрилингвальных компетенций студентов при обучении английскому как третьему иностранному языку.

Задачи исследования:

- изучить теоретические основы и механизмы развития плюрилингвальных компетенций студентов,
- выявить специфику обучения третьему иностранному языку, подчеркивая межъязыковые взаимодействия и сравнения,
- разработать модель стратегии, направленную на развитие плюрилингвальных компетенций студентов, с системой соответствующих заданий,
- апробировать разработанную модель стратегии в процессе обучения английскому как третьему иностранному языку в вузах и обосновать ее эффективность,
- обобщить результаты экспериментальных исследований, сделать выводы.

Научная новизна исследования. Нами разработана и в процессе обучения апробирована модель и система заданий для развития плюрилингвальных компетенций студентов. Разработанная модель и система заданий была апробирована в процессе обучения английскому как третьему иностранному языку в вузах, что позволило на практике обосновать эффективность применения разработанной стратегии и заданий. Разработанная модель стратегии вместе с соответствующей системой заданий может также быть применена в процессе обучения другим иностранным языкам с целью развития плюрилингвальных компетенций студентов.

Теоретическая значимость исследования. Выявленные в результате исследования закономерности, анализ результатов примененной стратегии, способствующей развитию плюрилингвальных компетенций студентов, дополняют существующие представления в области методики обучения иностранным языкам, в частности, теоретические концепции и положения, касающиеся развития плюрилингвальных компетенций студентов в процессе обучения третьему иностранному языку в вузах. Полученные данные могут расширить подходы к обучению иностранным языкам в вузах, основываясь на разработанной стратегии развития плюрилингвальных компетенций студентов.

Практическая значимость исследования. Результаты исследования могут быть применены в обучении английскому как иностранному языку в вузах, в обучении другим иностранным языкам, при условии адаптации разработанной стратегии и заданий в соответствии с требованиями обучения конкретному иностранному языку, а также в процессе подготовки педагогических кадров в вузах, на курсах профессиональной переподготовки преподавателей вузов, в создании новых учебно-методических пособий. Полученные результаты также могут быть применены в различных педагогико-методических исследованиях.

Структура и объем диссертации. Диссертация, объемом 163 страниц, состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы и приложений.

SIRANUSH EDUARD GHAZARYAN

STRATEGY FOR DEVELOPING STUDENTS' PLURILINGUAL COMPETENCES IN TEACHING ENGLISH

Thesis submitted for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.02 – Teaching and Learning Methodology (English Language).

The defense of the thesis will be held on January 30, 2025 at 12:00, at the session of the Special Board 020 “Pedagogy” HESC RA to award scientific degrees at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Address: 0010, 17 Tigran Mets Ave., Yerevan, Armenia.

SUMMARY

The relevance of the research. Currently, the number of foreign languages taught at HEIs is steadily increasing. Students often study multiple foreign languages either simultaneously or sequentially. However, they frequently overlook the connections between these languages and fail to consider them in their learning process. Recognizing and leveraging such connections can significantly accelerate learning and enhance its effectiveness. In teaching a third foreign language, it is essential to consider not only the students' knowledge of their native language but also their proficiency in other languages, their communicative language skills, as well as their overall social and learning experience, applying an appropriate strategy to develop plurilingual competences.

Therefore, the relevance of the research is conditioned by the fact that the enhancement of students' plurilingual competences has become an undeniable necessity of our time. It requires the development of an appropriate strategy and its implementation in the teaching process, which will make the teaching of each new foreign language faster, easier, and more effective. Additionally, the relevance of the research topic is justified by the lack of fundamental studies on this subject in RA. Thus, the relevance of the research is conditioned by the need to develop students' plurilingual competences at HEIs in RA. Highlighting the significance of the topic, an attempt was made to identify the existing difficulties in mastering plurilingual competences by students during the process of learning English as a third foreign language at HEIs, and to develop a model of strategy aimed at their development.

The basis for conducting the research was the process of teaching English at HEIs in RA, which includes students who speak Armenian as their native language, Russian as their first foreign language, and French as their second foreign language. The native language of Armenian students, Armenian, represents an independent branch of the Indo-European language family. Their first foreign language is usually Russian, as it has traditionally been taught as the first foreign language in Armenian schools. Russian is also part of the Indo-European language family, but belongs to the East Slavic sub-branch. The second foreign language in Armenian schools is generally English or German (both of which belong to the West Germanic sub-branch of the Indo-European language family), or French (which, while part of the same language family, belongs to the Romance language group). Students who have studied French in school usually choose English as their third foreign language at HEIs.

The research focuses on the process of developing plurilingual competences among university students, particularly in the context of teaching English as a third foreign language. The thesis emphasizes that the development of students' plurilingual competences should be integrated with the development of pluricultural competences and be grounded in the cognitive-communicative approach.

The aim of the research is to develop and implement a model of strategy for enhancing students' plurilingual competences in teaching English as a third foreign language, based on identifying commonalities and differences among English and students' native, first, and second foreign languages, activating their language-cultural, metalinguistic, cognitive-communicative, metacognitive, compensatory skills, and their skills of transfer, as well as their social and emotional needs.

The object of the research is the process of teaching English as a third foreign language at HEIs.

The subject of the research is the strategy for the development of students' plurilingual competences in teaching English as a third foreign language.

The objectives of the research:

- to study the theoretical foundations and mechanisms underlying the development of students' plurilingual competences,
- to identify the features of teaching a third foreign language, with an emphasis on interlanguage interactions and comparisons,
- to develop a model of strategy aimed at enhancing students' plurilingual competences, supported by a corresponding system of tasks,
- to implement the developed model of strategy in the process of teaching English as a third foreign language at HEIs and substantiate its effectiveness,
- to summarize the outcomes of the experimental studies and draw conclusions.

The scientific novelty of the research. A model of strategy and a system of tasks for enhancing students' plurilingual competences have been developed and implemented in the teaching process. The developed model and task system were trialled in the context of teaching English as a third foreign language at HEIs, which allowed for a practical demonstration of the effectiveness of the applied strategy and tasks. This model of strategy, along with the corresponding system of tasks, can also be applied in teaching other foreign languages, with the aim of developing students' plurilingual competences.

The theoretical significance of the research. The patterns revealed through this research, along with the analysis of the results from applying the strategy that promote the development of students' plurilingual competences, complement the existing concepts in foreign language teaching methodology. Specifically, they enhance the theoretical understanding and principles related to the development of plurilingual competences in the context of teaching a third foreign language at HEIs. The data obtained can also expand the approaches to foreign language teaching at HEIs by incorporating a strategy aimed at developing students' plurilingual competences.

The practical significance of the research. The findings of the research can be applied in teaching English as a foreign language at HEIs, teaching other foreign languages by tailoring the proposed strategy and tasks to the specific needs of the language being taught. The results can also be incorporated into the preparation of foreign language pedagogues at HEIs, professional development programmes for HEI lecturers, and the creation of innovative instructional and methodological manuals. Additionally, the outcomes provide a useful basis for further pedagogical and methodological research in this domain.

The structure and the volume of the thesis. The thesis (163 pages) consists of an introduction, two chapters, a conclusion, a list of references, and appendices.

